«Լիցենզավորման ենթակա նախադպրոցական կրթական ծրագրին և ծառայությանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրաման

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 22-րդ կետերի պահանջները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Սահմանել լիցենզավորման ենթակա՝

- նախադպրոցական լրացուցիչ և այլընտրանքային (բացառությամբ միջազգային) կրթական ծրագրին ներկայացվող պահանջները և տևողությունը՝ համաձայն հավելված 1-ի.
- նախադպրոցական ծառայությանը ներկայացվող պահանջները և տևողությունը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված 1

Կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարի 2022 թվականի

-ի N -Ն հրամանի

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Բովանդակությանը ներկայացվող պահանջները

1. Լիցենզավորման ենթակա նախադպրոցական կրթական լրացուցիչ և այլընտրանքային (բացառությամբ միջազգային) ծրագրերը (այսուհետ՝ ծրագիր) կարող են լինել համալիր (հիմնական) և ըստ կրթական առանձին բովանդակային բաղադրիչների:
2. Ծրագրի անբաժանելի մասն է գործունեության տարբեր ձևերի հերթագայումը, խաղային և ուսումնական գործունեության հարաբերակցությունը տեսանելի դարձնող կանոնակարգը:
3. Ծրագրով կարող են նախատեսվել երեխայի առօրյայի կազմակերպման ստորև նշված ձևերի կամ դրանցից որևէ մեկի կիրառումը՝

1) պարապմունքներ՝ որպես ուսուցման կազմակերպման հատուկ ձև.

2) խաղային գործունեության տեսակներ.

3) օրվա ընթացքում երեխայի ազատ ժամանակի տնօրինում:

4. Ծրագրի բովանդակությունը կարող է ուղղված լինել զարգացման նշված մեկ կամ մի քանի հիմնական բնագավառների (ուղղությունների)՝

1) խոսքի և հաղորդակցման, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողության զարգացում.

2) հուզակամային և սոցիալ-անձնային զարգացում.

3) շարժողական և ֆիզիկական զարգացում.

4) աշխարհաճանաչման, ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.

5) բարոյական, ազգային, էկոլոգիական, իրավական գիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ:

5. Ծրագրերին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

1) համապատասխանությունը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին.

2) կրթության աշխարհիկ բնույթը.

3) երեխաների և մեծահասակների փոխգործունեության անհատակողմնորոշված (երեխայակենտրոն) մոտեցման ապահովումը.

4) ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը.

5) նախադպրոցական կրթության բովանդակության մեջ երեխայի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղագիտական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, բնագիտության հիմունքներին ծանոթացման ներառումը:

6. Ծրագիրը, որպես անբաժանելի մաս, պետք է ունենա թեմատիկ պլանավորում (Ձև 1):

2. Տևողությունը

7. Ծրագրի տևողությունը կարող է սահմանվել՝

- առավելագույնը 4 ժամ.
- 5-ից 9 ժամ.
- 12 ժամ:

8. Ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ պլանավորմամբ (պարբերականությամբ)՝

- շաբաթվա ընթացքում 1-2 անգամ.
- շաբաթվա ընթացքում 3-4 անգամ.
- շաբաթվա ընթացքում 5-6 անգամ.
- Ծնողի հետ համաձայնեցված ժամանակացույցով:

3. Մարդկային ռեսուրսները և նյութատեխնիկական հագեցվածությունը

9. Ծրագրին համապատասխան որակավորմամբ (միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթությամբ) մասնագետ:
10. Սանի կրթական և զարգացման գործունեությանն անմիջական աջակցող անձնակազմ:
11. Ծրագրի բովանդակությանը համապատասխան նյութատեխնիկական բազա և տարածք:

Հավելված 2

Կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարի 2022 թվականի

-ի N -Ն հրամանի

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Լիցենզավորման ենթակա նախադպրոցականծառայությունները (այսուհետ՝ ծառայություն) նախադպրոցական տարիքի երեխայի առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, խնամքին և հսկողությանը միտված ծառայություններ են, որոնք ապահովվում են սահմանված նորմատիվների առկայության պայմաններում՝ պայմանագրային հիմունքներով:
2. Ծառայության տևողությունը կարող է սահմանվել՝

- մինչև 4 ժամ, եթե մատուցվում է միայն ծառայություն.
- Նախադպրոցական կրթական ծրագրի ողջ ընթացքում, եթե մատուցվում է այդ ծրագրի հետ համակցված:

3. Նախադպրոցական ծառայության հաստատման համար ներկայացվող փաստաթղթերն են՝

- ծառայություն մատուցող մասնագետների թվի և կազմի վերաբերյալ տեղեկանք, որը պետք է ներառի վերջիններիս կրթությանև փորձառության վերաբերյալ ինքնակենսագրական տվյալներ՝ մատուցվող ծառայության ուղղվածությանը համապատասխան.
- համապատասխան նյութատեխնիկական հագեցվածության և տարածքի վերաբերյալ տեղեկանք.
- ծառայության իրականացման ժամանակացույց և պլան (Ձև 2):

Ձև 1

Տարիքային խումբ ----------

Ծրագրի կազմման մանկավարժահոգեբանական հիմունքները՝ ----------

Ծրագրի բաշխումը՝ ըստ ծրագրային բաղադրիչների Ժամաքանակը՝ շա

1. ---------- թեմատիկ պլանավորում

(Ծրագրային բաղադրիչի անվանումը)
Թեմա
Նպատակ
Վերջնարդյունք(ներ)
Մեթոդներ

Ժամաքանակը՝ շ

---------- թեմատիկ պլանավորում

(Ծրագրային բաղադրիչի անվանումը)

1. Թեմա

Նպատակ

Վերջնարդյունք(ներ)

Մեթոդներ

Գրականության ցանկ

Ձև 2

Տարիքային խումբ ----------

Ծառայության տեսակը՝ Տևողություն/քանա

1. Խնամք
2. Հսկողություն
3. Սննդի կազմակերպում
4. Տրանսպորտային ծառայություն, տեղափոխում
5. Այլ